Նոր Գեղի համայնք,Ֆրոնտիկ Թևոսյանի 64,093335600,norgeghi.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հուլիսի 2017 թվականի N 47

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2008ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 3/4 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, Նոր Գեղի համայնքի ավագանին *որոշում է.*

1. Համայնքի ավագանու 2008 թվականի փետրվարի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղիի Ցոլակ Մանվելի Խաչատրյանի անվան մշակույթի կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին>> N 3/4 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

կողմ (10) դեմ ( 0) ձեռնպահ ( 0)

Սամվել Ալեքսանյան
Անահիտ Առաքելյան
Վանիկ Ավայան
Արմեն Բաբախանյան
Գագիկ Գևորգյան
ՎահագԳևորգյան
Վարդիկ Գրիգորյան
Մանյա Կիրակոսյան
Շիրալի Մամոյան
Նաթելա Շմավոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖՐՈՆՏԻԿ ԹԵՎՈՍՅԱՆ

Հաստատված

Նոր Գեղի համայնքի ավագանու

2017թվականի հուլիսի 6-ի N 47 որոշման

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻԻ ՑՈԼԱԿ ՄԱՆՎԵԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1<<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղիի Ցոլակ Մանվելի Խաչատրյանի անվան մշակույթի կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետև՝ կազմակերպություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Նոր Գեղի համայնքի ավագանու 2008թվականի փետրվարի 27-ի թիվ 3/4 որոշմամբ: Կազմակերպությունը ստեղծվել է առանց ժամկետային սահմանափակման:

1.2 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3 Հիմնադրի և կազմակերպության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ: Նոր Գեղի գյուղական համայնքի անունից կազմակերպության կառավարումն իրականացնող մարմին հանդիսանում է համայնքի ղեկավարը, որի ենթակայությանն է հանձնվում կազմակերպությունը:

1.4 Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5 Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.6 Կազմակերպությունը կարող է ունենալ մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ,որոնք ստեղծվում են հիմնադրի որոշմամբ և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

1.7 Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն անվամբ կլոր կնիք, դրոշմակնիք, կարող է ունենալ ձևաթղթեր,խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

1.8 Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

1.9 Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում մինչև կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

1.10 Կազմակերպության անվանումն է՝

- Հայերեն <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղիի Ցոլակ Մանվելի Խաչատրյանի անվան մշակույթի կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

1.11 Կազմակերպության հասցեն է ՀՀ Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, Ուսանողական փողոց 15:

## 2.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Մշակույթի կենտրոնը ստեղծվում է մշակութային արժեքների պահպանման և պրոպագանդման, անհատի համակողմանի մշակութային դաստիարակության, ազգաբնակչության ազատ ժամանցի կազմակերպման իրականացման ուղղությամբ:

2.2 Կենտրոնի նպատակներն են՝

- Իրականացնել ազգաբնակչության շրջանում գեղագիտական և մշակութային խորը դաստիարակություն:
- Իրականացնել ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում:
- Իրականացնել մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի վճարովի ուսուցում:
- Բնակության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար արվեստի զանազան ճյուղերի, մշակույթի և արհեստների ուսուցողական ծրագրերի իրականացում:
- Տարածքը տրամադրել վարձակալական հիմունքներով, մատաղ սերնդի մեջ մշակութային կյանքը զարգացնելու համար:

2.3 Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակը՝

- Համերգային գործունեություն, ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար /ոչ առևտրային կազմակերպությունը/ իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա:

Համայնքային բյուջեով կազմակերպության համար ուղղակիորեն նախատեսված միջոցների սահմաններում կազմակերպության կողմից համայնքային մատուցվող ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է մեկ աղբյուրից գնումների կատարման ձևով: Կազմակերպության կողմից համայնքային այլ ծառայությունների աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ իրացվել միայն <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

2.4 Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները կատարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով

## 3.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը և կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը:

3.2 Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա/ Կազմակերպության հիմնադրումը:

բ/ Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը:
գ/ Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը:
3.3 Հիմնադիրը /համայնքի ղեկավարը/ իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար:
Նոր Գեղի համայնքի ղեկավարը՝
ա/ Հաստատում է կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և /կամ/ ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմը:
բ/ Հաստատում է կազմակերպության կանոնադրությունը և կանոնադրության փոփոխությունները:
գ/ Սահմանում է կազմակերպության կառավարման համակարգը:
դ/Նշանակում է կազմակերպության լուծարման հանձնաժողով և հաստատում լուծարման հաշվեկշիռը:
ե/ Սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացվում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:
զ/ Իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը:
է/ Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցադրումները:
ը/ Լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները:
թ/Վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանը ամրացված համայնքային սեփականության օգտագործման պահպանության նկատմամբ:
ժ/Վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման և ձեռք բերման կամ վարձակալության հանձնման համար:
ի/ Հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը:
լ/ Հաստատում է կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը:
3.4 Կազմակերպության գործադիր մարմինը.
3.4.1 Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը: Կազմակերպության տնօրենը, օրենքով, հիմնադրի սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների իրավական այլ ակտերի հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար :
3.4.2 Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը համայնքի անունից ստորագրում է Նոր Գեղի համայնքի ղեկավարը:
3.4.3 Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակվող անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին:
3.4.4 Կազմակերպության տնօրենը պետք է ունենա մասնագիտական բարձրագույն կրթություն, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

3.4.5 Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը պատճառված վնասի համար:
3.4.6 Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակվող անձը պարտավոր է չկատարել հիմնադրի՝ ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:
3.5 Տնօրենը՝
ա/ Առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ:
բ/ ՀՀ օրենսդրությամբ հիմնադրի որոշումներով ու կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները:
գ/ Տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր:
դ/ Աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում աշխատանքային պայմանագրի համաձայն կազմակերպության աշխատողներին,նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր:
ե/ Բանկում բացում է հաշվարկային հաշիվներ:
զ/Կատարում է աշխատանքի բաշխում աշխատողների միջև:
է/ Սահմանում է կազմակերպության կանոնադրության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումները:
ը/ Ապահովում է կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանց սահմանված կարգով ներկայացնում հիմնադրին:
թ/ Իրականացնում է օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

## 4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

4.1 Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության տնտեսական գործունեության վերակազմակերպման ժամանակ: Հիմնադրի որոշմամբ սահմանված չափով հանձնված գույքից, հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրանց հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:
4.2 Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և /կամ/ սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել,տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
4.3 Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:
4.4 Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:
4.5 Հիմնադիրը կարող է կազմակերպությանը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:
Հիմնադիրը իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանը ամրացված գույքը:
4.6 Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:
Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ:

Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:
Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են:
Կազմակերպությանը ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են հիմնադրի սեփականությունը:
4.7 Հիմնադրի կողմից գույքը կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:
4.8 Հիմնադրի կողմից կազմակերպությանը ամրացված անշարժ գույքի կամ համայնքային պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի համայքային գրանցման պահից:
4.9 Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուր է հանդիսանում համայնքային նշանակության ծախսերին ամրագրված եկամուտներից հատկացումները, ինչպես նաև վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված և օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցներից, իրավաբանական, ֆիզիկական անձանց կամավոր ներդրումներից և հանգանակություններից, տեղական և արտասահմանյան միջազգային կազմակերպությունների կրթամշակութային գործունեությանը տրամադրված դրամաշնորհներից:
Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են կազմակերպության եկամուտների մեջ և կազմում են նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդը:
4.10 Կազմակերպության անձնակազմի և վարչատնտեսական աշխատողների թվաքանակը սահմանվում է նախահաշվով հաստատված աշխատավարձի ֆոնդի շրջանակներում:
4.11 Աշխատավարձի ֆոնդի սահմաններում կազմակերպությունն ինքնուրույն հաստատում է հաստիքային ցուցակը և գործող կարգի համաձայն սահմանում է պաշտոնական դրույքներ:
4.12 Վարչական և այլ աշխատողների աշխատավարձը հաշվարկելիս ի պաշտոնե աշխատավարձերը և տարիֆային դրույքները պետք է դիտվեն որպես երաշխավորվող վարձատրությամբ նվազագուն չափ:
4.13 Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է հիմնադիրը:
4.14 Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի /վերստուգման/ հիմնադրի կողմից ընտրված աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից:

## 5.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ և ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

5.1 Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:
5.2 Կազմակերպության լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքը ուղղվում է համայնքային բյուջե:
5.3 Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրոնտիկ Թևոսյանի 64,093335600,norgeghi.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հուլիսի 2017 թվականի N 48

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 80 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի <<Նոր Գեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 80 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

կողմ (10) դեմ ( 0 ) ձեռնպահ ( 0 )

Սամվել Ալեքսանյան
Անահիտ Առաքելյան
Վանիկ Ավալյան
Արմեն Բաբախանյան
Գագիկ Գևորգյան
ՎահագԳևորգյան
Վլադիկ Գրիգորյան
Մանյա Կիրակոսյան
Շիրալի Մամոյան
Նաթելա Շմավոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖՐՈՆՏԻԿ ԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված
Նոր Գեղի համայնքի ավագանու
2017 թվականի հուլիսի 5-ի N 48 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
Նոր Գեղիի համայնքապետարանի աշխատակազմի
Աշխատակիցների թվաքանակը՝ 20

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Համայնքապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | | 1 | 360000 | | | 360000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | | 1 | 210000 | | | 210000 |
| 3 | | Համայնքի ղեկավարի խորհրդական | Հայեցողական | | 1 | 170000 | | | 170000 |
| 4 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 190000 | | 19000 | 209000 |
| 5 | | Ներքին աուդիտի բաժնի պետ | Համայնքային ծառայության | 2.1-1 | 1 | 170000 | | | 170000 |
| 6 | | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-1 | 1 | 165000 | | 16500 | 181500 |
| 7 | | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-2 | 1 | 165000 | | | 165000 |
| 8 | | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-3 | 1 | 165000 | | | 165000 |
| 9 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-1 | 1 | 160000 | | 16000 | 176000 |
| 10 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-2 | 1 | 160000 | | | 160000 |
| 11 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 155000 | | 15500 | 170500 |
| 12 | | գործավար | Տեխնիկական սպասարկման | | 1 | 120000 | | | 120000 |
| 13 | | Վարորդ ավտոբուսի | Տեխնիկական սպասարկման | | 1 | 110000 | | | 110000 |
| 14 | | Վարորդ ծառայողական մեքենայի | Տեխնիկական սպասարկման | | 1 | 110000 | | | 110000 |
| 15 | | վարորդ Զիլ մեքենայի | Տեխնիկական սպասարկման | | 1 | 110000 | | | 110000 |
| 16 | | պահակ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 75000 | | | 75000 |
| 17 | | պահակ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 75000 | | | 75000 |
| 18 | | հավաքարար | Տեխնիկական սպասարկման | | 1 | 75000 | | | 75000 |
| 19 | | մեխանիզատոր | Տեխնիկական սպասարկման | | 1 | 75000 | | | 75000 |
| 20 | | էլեկտրիկ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 75000 | | | 75000 |
| | Ընդամենը | | | | 20 | 2895000 | 0 | 67000 | 2962000 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրոնտիկ Թևոսյանի 64,093335600,norgeghi.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

06 հուլիսի 2017 թվականի N 49

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Նոր Գեղի գյուղական համայնքի հողային հաշվեկշիռը համաձայն կից ձևաթղթի:

Առդիր՝ 2/երկու/ թերթ:

կողմ (10) դեմ ( 0) ձեռնպահ ( 0)

Սամվել Ալեքսանյան

Անահիտ Առաքելյան

Վանիկ Ավայան

Արմեն Բաբախանյան

Գագիկ Գևորգյան

ՎահագԳևորգյան

Վլադիկ Գրիգորյան

Մանյա Կիրակոսյան

Շիրալի Մամոյան

Նաթելա Շմավոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖՐՈՆՏԻԿ ԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրոնտիկ Թևոսյանի 64,093335600,norgeghi.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հուլիսի 2017 թվականի N 50

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ -ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, Նոր Գեղի համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

Համայնքի սեփականություն համարվող հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն աղյուսակի:

կողմ (10) դեմ ( 0) ձեռնպահ ( 0)

Սամվել Ալեքսանյան
Անահիտ Առաքելյան
Վանիկ Ավայան
Արմեն Բաբախանյան
Գագիկ Գևորգյան
ՎահագԳևորգյան
Վարդիկ Գրիգորյան
Մանյա Կիրակոսյան
Շիրալի Մամոյան
Նաթելա Շմավոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖՐՈՆՏԻԿ ԹԵՎՈՍՅԱՆ

Աղյուսակ

Բնակավայրերի և գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդ-վաճառք

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հողամաս | Նոր Գեղի | 07-048-0313-0005 | 0.15045 | | գյուղատնտեսական | Այլ հողատեսք | 20310 | չկա |
| 2 | Հողամաս | Նոր Գեղի | 07-048-0431-0029 | 0.83251 | | գյուղատնտեսական | վարելահող | 919930 | չկա |
| 3 | Հողամաս | Նոր Գեղի | 07-048-1118-0005 | 0.56413 | | գյուղատնտեսական | վարելահող | 623370 | չկա |
| 4 | Հողամաս | Նոր Գեղի | 07-048-0031-0028 | 0.0474 | բնակավայրերի | | Այլ հողեր | 696780 | չկա |
| 5 | Հողամաս | Նոր Գեղի | 07-048-0031-0027 | 0.07064 | բնակավայրերի | | Այլ հողեր | 1038410 | չկա |
| 6 | Հողամաս | Նոր Գեղի | 07-048-0605-0003 | 0.01831 | բնակավայրերի | | Այլ հողեր | 269160 | չկա |
| 7 | Հողամաս | Նոր Գեղի | 07-048-0605-0002 | 0.01497 | բնակավայրերի | | Այլ հողեր | 220060 | չկա |
| 8 | Հողամաս | Նոր Գեղի Ռազմողական փ.թիվ 12/1 | 07-048-0065-0169 | 0.0042 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 61740 | չկա |
| 9 | Հողամաս | Նոր Գեղի Ռազմողական փ.թիվ 12/2 | 07-048-0065-0167 | 0.00528 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 77620 | չկա |
| 10 | Հողամաս | Նոր Գեղի Ռազմողական փ.թիվ 12/3 | 07-048-0065-0180 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 11 | Հողամաս | Նոր Գեղի Ռազմողական փ.թիվ 12/4 | 07-048-0065-0178 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 12 | Հողամաս | Նոր Գեղի Ռազմողական փ.թիվ 12/5 | 07-048-0065-0182 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 13 | Հողամաս | Նոր Գեղի Ռազմողական փ.թիվ 12/6 | 07-048-0065-0183 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 14 | Հողամաս | Նոր Գեղի Ռազմողական փ.թիվ 12/7 | 07-048-0065-0184 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | Հողամաս | Նոր Գեղի Ուսանողական փ.թիվ 12/8 | 07-048-0065-0168 | 0.00528 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 77620 | չկա |
| 16 | Հողամաս | Նոր Գեղի Ուսանողական փ.թիվ 12/9 | 07-048-0065-0191 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 17 | Հողամաս | Նոր Գեղի Ուսանողական փ.թիվ 12/10 | 07-048-0065-0179 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 18 | Հողամաս | Նոր Գեղի Ուսանողական փ.թիվ 12/11 | 07-048-0065-0186 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 19 | Հողամաս | Նոր Գեղի Ուսանողական փ.թիվ 12/12 | 07-048-0065-0185 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 20 | Հողամաս | Նոր Գեղի Ուսանողական փ.թիվ 12/13 | 07-048-0065-0187 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 21 | Հողամաս | Նոր Գեղի Ուսանողական փ.թիվ 12/14 | 07-048-0065-0188 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 22 | Հողամաս | Նոր Գեղի Ուսանողական փ.թիվ 12/15 | 07-048-0065-0189 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 23 | Հողամաս | Նոր Գեղի Ուսանողական փ.թիվ 12/16 | 07-048-0065-0189 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 24 | Հողամաս | Նոր Գեղի Ուսանողական փ.թիվ 12/17 | 07-048-0065-0181 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 25 | Հողամաս | Նոր Գեղի Ուսանողական փ.թիվ 12/18 | 07-048-0065-0192 | 0.00262 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38520 | չկա |
| 26 | Հողամաս | Նոր Գեղի Ուսանողական փ.թիվ 12/19 | 07-048-0065-0174 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 27 | Հողամաս | Նոր Գեղի Ուսանողական փ.թիվ 12/20 | 07-048-0065-0173 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 28 | Հողամաս | Նոր Գեղի Ուսանողական փ.թիվ 12/21 | 07-048-0065-0177 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 29 | Հողամաս | Նոր Գեղի Ուսանողական փ.թիվ 12/22 | 07-048-0065-0175 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 30 | Հողամաս | Նոր Գեղի Ուսանողական փ.թիվ 12/23 | 07-048-0065-0171 | 0.00264 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 31 | Հողամաս | Նոր Գեղի Ռաանողական փ.թիվ 12/24 | 07-048-0065-0176 | 0.00264 | բնակավ այրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 32 | Հողամաս | Նոր Գեղի Ռաանողական փ.թիվ 12/25 | 07-048-0065-0170 | 0.00264 | բնակավ այրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 33 | Հողամաս | Նոր Գեղի Ռաանողական փ.թիվ 12/26 | 07-048-0065-0172 | 0.00264 | բնակավ այրերի | | Հասարակական կառուցապատման | 38810 | չկա |
| 34 | Հողամաս | Նոր Գեղի Ֆրոնտիկ Թևոսյանի փ.թիվ 121/6 | 07-048-0058-0102 | 0.00961 | բնակավ այրերի | | բնակելի կառուցապատման | 141270 | չկա |

Նոր Գեղիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա.Առաքելյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրոնտիկ Թևոսյանի 64,093335600,norgeghi.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հուլիսի 2017 թվականի N 51

## ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշմամբ սահմանված դրույթներով համայնքի ավագանին որոշում է.

1.Նարեկ Անժելոդի Նալբանդյանին սեփականության իրավունքով պատկանող 07-048-0401-0001 կադաստրային ծածկագրով 0.5963 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողին կից գտնվող 07-048-0401-0002 կադաստրային ծածկագրով 0.47527 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով, ընդլայնման համար, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կադաստրային արժեքով, որը կազմում է՝ 64160 /վաթսունչորս հազար հարյուր վաթսուն /դրամ:

2.Նարեկ Անժելոդի Նալբանդյանին սեփականության իրավունքով պատկանող 07-048-0407-0008 կադաստրային ծածկագրով 2.2645 հա գյուղատնտեսական նշանակության հնդավոր այգուն կից գտնվող 07-048-0407-0007 կադաստրային ծածկագրով 0.4735 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով, ընդլայնման համար, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կադաստրային արժեքով, որը կազմում է՝ 63930/վաթսուներեք հազար հինը արյուր երեսուն /դրամ;

3.Նարեկ Անժելոդի Նալբանդյանին սեփականության իրավունքով պատկանող 07-048-0406-0006 կադաստրային ծածկագրով 1.5651 հա գյուղատնտեսական նշանակության հնդավոր այգուն կից գտնվող 07-048-0406-0004 կադաստրային ծածկագրով 0.27953 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով, ընդլայնման համար, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կադաստրային արժեքով, որը կազմում է՝ 37740 /երեսունյոթ հազար յոթ հարյուր քառասուն /դրամ:

4.Նարեկ Անժելոյի Նալբանդյանին սեփականության իրավունքով պատկանող 07-048-0436-008 կադաստրային ծածկագրով 0.313 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողին կից գտնվող 07-048-0436-0009 կադաստրային ծածկագրով 0.08881 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով, ընդլայնման համար, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կադաստրային արժեքով, որը կազմում է՝ 11990 /տասնմեկ հազար ինը հարյուր իննսուն /դրամ:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

կողմ (10) դեմ ( 0) ձեռնպահ ( 0)

Սամվել Ալեքսանյան
Անահիտ Առաքելյան
Վանիկ Ավայան
Արմեն Բաբախանյան
Գագիկ Գևորգյան
ՎահագԳևորգյան
Վադիկ Գրիգորյան
Մանյա Կիրակոսյան
Շիրալի Մամոյան
Նաթելա Շմավոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖՐՈՆՏԻԿ ԹԵՎՈՍՅԱՆ